

Ձնաբուք՝ Սելինի
լեռնանցքում



Ինքնաթիռն ընկել է
Միջերկրական ծովը

Երաժշտության
մոգական ուժը



6



Օգտակար կալցիումը



արտակարգ թերթ

N 2 (323) 29.1.2010 - 4.2.2010 www.emergency.am

Հայոց բանակն արդեն 18 փարեկան է



Եթե հանուն ըմբռնումի հարկավոր է մտովի տարբերակել խոսքն ու Գործը, ապա բանակը Գործն է, իսկ մեր բանակը՝ ասվածի մարմնավորումը:

Հայկական բանակը ձեռնարկվեց պատերազմելիս ու պատերազմելով:
Հայկական բանակը ծնվեց հաղթանակից, որպեսզի կրկին

կայանա այն ճշմարտությունը, թե խաղաղության մեջ արարել կարողանալու համար պիտի կարողանաս բանակ ունենալ:
Բանակն է, որ հաղթանակներ է ծնում: Մեր հաղթանակը բանակ ծնեց:
Պետականությունը, Ազատությունը, Անկախությունը պարտադիր հոգեւոր արժեքներ են, եւ ամենից շատ հենց հոգեւոր արժեքներն են, որ պաշտպանության կարիքն ունեն, որովհետեւ բոլոր պատերազմներն, իսկն ասած, հենց հանուն դրանց էլ մղվում են:
Ուստի մարդը դատապարտված է կրծքով պաշտպանելու իր հոգեւոր արժեքները: Դա է պատճառը, որ մեզ հաղթանակ չնորհած մեր բանակը մենք պիտի դնենք մեր նվաճումների շարքում: Մի ամբողջ պատմություն եւս ինքներս մեզնից չհեռանալու համար:
Շնորհավոր տոնդ, Հայոց Բանակ:

«Արտակարգ ալիք» հեռուստահաղորդում

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը Հայաստանում սկսում է աղետների նվազեցման երկարաժամկետ գործընթացի առաջին գնահատման փուլը:
Բրազիլացի իրշեջները Հայաստանի փրկարար ծառայությունում: Նոր համագործակցության առաջին քայլերը:
Վերելակային տնտեսություն. ու՞մ մեղքով են մահանում ու հաշմանդամ դառնում անսարք վերելակների ուղեւորները:
2012 թվականի առեղծվածը. ովքե՞ր են կողմնակից աշխարհի վերջին, ինչու՞ են ամերիկացիները կինոներում անընդհատ կործանում իրենց երկիրը:
Ինչ անել, եթե ձեր կողքին ուշագնաց են լինում կամ հայտնվում անգիտակից վիճակում. առաջին օգնության համրագիտարան:



Այս եւ այլ ուշագրավ թեմաների մասին՝
շաբաթ օրը, հունվարի 30-ին,
22:30-ին Շանթի եթերում:
Կրկնությունը՝ կիրակի, 12:20-ին:

Ռիսկերի նվազեցման արդի համակարգի տեսլականը

ՄԱԿ-ի Ջրագացման ծրագրի կարողությունների կառավարման խումբը, հիմնվելով Արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում ԱՆՆ Հայաստանի փրկարար ծառայության հետ նախկին համագործակցության հարուստ եւ արդյունավետ փորձի վրա, մտադիր է այստեղ առավել երկարաժամկետ ծրագրեր իրականացնել: Հետագա համատեղ աշխատանքների ուղղությունները որոշելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ կարիքներ ունի համակարգը:



Սախորդ հանդիպման ժամանակ ՄԱԿ-ի մշտական ներկայացուցչի տեղակալ Դիրք Բրեբերգն իր ելույթում նշել էր, որ Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների շարքում Հայաստանն առաջամարտիկ է արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում:
Էդիկ Բարսեղյան ՉԾԾ տնօրեն, ԱՆՆ նախարարի առաջին տեղակալ.
- Գաղտնիք չէ, որ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների եզրակացությամբ, Հայաստանը սեյսմակայուն էրկիր է, սեյսմիկ ռիսկը լավ բարձր է: Առկա է նաեւ տարածաշրջանի եւ սեյսմաճիկ աղետների, սողանքների ռիսկ, եւ մենք ունենք բոլոր հնարավոր եւ անհնարին միջոցները ձեռնարկելով, որպեսզի առավելագույնս նվազեցնենք ռիսկերը:
Համակարգի կարիքները բանաձեւելու համար կազմակերպված այս քննարկման ժամանակ ներկայացվեցին Արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումների եւ Հայաստանի փրկարար ծառայության ներկայիս հնարավորությունները:
Համակարգը մշտապես կատարելագործման պրոցեսի մեջ է, եւ նոր նախարարության ստեղծումից հետո դեռ շատ անելիքներ կան: Որպեսզի աշխատանքներն ավելի համակարգված եւ արդյունավետ ճանապարհով զնան, պետք է համախմբել կառույցի

«Էլիտ գրուպ» կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:
Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:
«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:
«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:
Ծիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:
Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Ջայաստանի փրկարար ծառայությունը զանգահարեք 1-01, 1-12

Ավտոպատահար Երեւան-Իջեւան ավտոճանապարհին

Հունվարի 24-ին, ժամը 20.25-ին Տավուշի մարզային ոստիկանությունից ստացված տեղեկության համաձայն՝ Երեւան-Իջեւան ավտոճանապարհի 119-րդ կիլոմետրում տեղի է ունեցել ավտոպատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր են մեկնել մեկ մարտական հաշվարկ եւ մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Դեռեւս չչարզված հանգամանքներում՝ «ԳԱԶ-24» մակնիշի 57 SL 039 պետհամարանիշի ավտոմեքենան բախվել է «ԿամԱՁ» մակնիշի 643 LL 36 պետհամարանիշի բեռնատարին: Պատահարի հետեւանքով «ԳԱԶ-24» մակնիշի ավտոմեքենայի վարորդը, Դիլիջանի Օրջոնիկիձեի 79/14 հասցեի բնակիչ, 1956 թ. ծնված Էդիկ Թովմասյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Իջեւանի հիվանդանոց: Ժամը 03.00-ին տուժածը հիվանդանոցում մահացել է:

Մեքենան գլորվել է ձորը

Հունվարի 25-ին, ժամը 19.50-ին Վայոց ձորի մարզից տեղեկություն է ստացվել, որ Երեւան-Մեղրի ավտոճանապարհին

հի 127-րդ կիլոմետրում տեղի է ունեցել ավտոպատահար եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Դեռեւս չչարզված հանգամանքներում ճանապարհի երթուղեկի մասից դուրս է եկել եւ ձորը գլորվել «ՎԱԶ-2121» մակնիշի 07 SO 988 պետհամարանիշի ավտոմեքենան: Պատահարի հետեւանքով ավտոմեքենայի վարորդը՝ 1962 թ. ծնված Ռոբերտ Ալանյանը ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ: Մինչ փրկարարների ժամանումը՝ Ռ. Ալանյանը տեղի ուժերով դուրս է բերվել ձորից ու տեղափոխվել Եղեգնաձորի հիվանդանոց:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության:

Ձնաբուք՝ Սելիմի լեռնանցքում



Հունվարի 24-ին, ժամը 00.10-ին ահազանգ է ստացվել, որ Սելիմի լեռնանցքում՝ Եղեգնաձոր-Մարտունի ավտոճանապարհի 44-րդ կմ-ում, ձնաբքի հետեւանքով ճանապարհին ավտոմեքենաներ են մնացել:

Դեպքի վայր է մեկնել Վայոց ձորի մարզային փրկարարական ջոկատը: Փրկարարների եւ «Գավառի ճանշին» ՓԲԸ-ի աշխատակիցների համատեղ ուժերով ճանապարհի անանցանելի հատվածից դուրս է բերվել 18 ավտոմեքենա: Ժամը 03.04-ի դրությամբ «Գավառի ճանշին» կողմից ճանապարհը մաքրվել է, երթուղեկությունը՝ վերականգնվել:

Մարդիկ ու մեքենաները՝ ձյան գերի

Հունվարի 25-ին, ժամը 15.30-ից մինչեւ 21.00-ն ահազանգեր են ստացվել, որ ձնաբքի հետեւանքով Շիրակի մարզում՝ Մայիսյան-Աշոցք, Թորոս-Աշոցք, Լանջիկ, Գյումրի-Թալին, Ցողամարգ-Վարդաբլուր, Գյումրի-Բավրա, Լոռու մարզում՝ Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի 10-րդ կմ-ում, Վայոց ձորի մարզում՝ Մարտունի-Եղեգնաձոր, Արագածոտնի մարզում՝ Թալին-Մաստրա ավտոճանապարհին արգելափակվել են բազմաթիվ ավտոմեքենաներ, առաջացել են խցանումներ եւ անհրաժեշտ է օգնություն՝ մեքենաները դուրս բերելու համար:

Ժամը 21.48-ին Շիրակի մարզից հայտնել են, որ մարզային «Ճանշին» ՓԲԸ-կողմից խցանումներից դուրս է բերվել 59 ավտոմեքենա:

Արագածոտնի մարզից տեղեկացրել են, որ մարզային փրկարարական ջոկատի, Թալինից մեկ մարտական հաշվարկի, ինչպես նաեւ հերթափոխից ազատ անձնակազմի օգնությամբ ժամը 22.00-ից մինչեւ 01.00-ն Թալին-Արթիկ ճանապարհահատվածում խցանումներից դուրս է բերել 17 ավտոմեքենա՝ մոտ 40 ուղևորներով, որոնց մի մասը տեղավորվել է գիշերելու Թալին քաղաքի իրջեջ-փրկարար ջոկատում:

Մարզային «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից դուրս է բերվել մոտ 40 ավտոմեքենա:

Կրկին ձնաբուք

Հունվարի 26-ին, ժամը 21.26-ին ահազանգ է ստացվել, որ Վանաձոր-Գյումրի ավտոճանապարհի 33-րդ կմ-ում ձնաբքի հետեւանքով արգելափակվել են բազմաթիվ ավտոմեքենաներ, առաջացել են խցանումներ, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած Լոռու մարզային փրկարարական ջոկատի կողմից ժամը 00.20-ի սահմաններում խցանումից դուրս է բերվել 8 ավտոմեքենա: Փրկարարների օգնությամբ արգելա-

փակված եւս երեք բեռնատար է դուրս բերվել Շիրակամուտ-Լուսազյուղ ավտոճանապարհից:

Քամին պոկել է տանիքը. կա տուժած



Հունվարի 25-ին, ժամը 17.27-ին ահազանգ է ստացվել, որ Արարատի մարզի Դալար գյուղում քամուց պոկված տան տանիքը ընկել է մարդկանց վրա, կան տուժածներ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը եւ մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ ուժեղ քամին պոկել է դպրոցի տանիքը (մոտ 1200 քմ մակերեսով) ու գցել գետին: Պատահարի հետեւանքով տարբեր մարմնական վնասվածքներ է ստացել մոտակայքում գտնվող 1973 թ. ծնված Նունե Խոջոյանը, որը մինչ փրկարարների ժամանումը տեղափոխվել է Արտաշատի հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ տուժածի կյանքին վտանգ չի սպառնում:

Վնասվել է նաեւ Լեւոն Վարդանյանին պատկանող մոտակայքում կայանված «Ֆոլքսվագեն» մակնիշի 19 US 571 պետհամարանիշի ավտոմեքենան:

Երեխան ընկել է ջրամբարը

Հունվարի 25-ին, ժամը 17.29-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Քանաքեռ ԴԷԿ-ի ջրամբարը երեխա է ընկել եւ նրան



միջազգային լուրեր

Փլվել է բնակելի տուն

Հունվարի 27-ին ուժեղ պայթյուն է որոտացել Բելգիայի Լյեժ քաղաքի բնակելի շենքերից մեկում: Պայթյունի հետեւանքով հինգհարկանի շենքն ամբողջությամբ փլվել է: Վերջին տվյալներով՝ տուժել է 40 մարդ, եւս եր-



կուսը համարվում են անհետ կորած: Պայթյունի ալիքից վնասվել են նաեւ հարեւան շինությունները եւ մոտակայքում կայանած ավտոմեքենաները:

Ըստ նախնական վարկածի՝ պատահարի պատճառը կենցաղային գազի պայթյունն է: Հայտնի է, որ պատահարից երեք օր առաջ գազի ծառայության մասնագետներն ահազանգով մեկնել

էին պայթյունի վայր, սակայն ստուգման ընթացքում կասկածելի ոչինչ չէր հայտնաբերվել: Իրականացվում է նախաքննություն:

Պայթյուն գնացքում

Ուկրաինայում ուժեղ պայթյուն է տեղի ունեցել Չերնովցի-Կիև ուղեւորատար գնացքում: Ուկրաինական լրատվամիջոցների տեղեկացմամբ՝ կան զոհեր եւ բազմաթիվ տուժածներ:

Միջադեպը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ գնացքը մեկնել է Չերնովցի կայարանից: Ըստ ոստիկանության ներկայացուցիչների՝ վագոններից մեկում պայթել է ուղևորներից մեկի մոտ գտնվող գազի բալոնը:

Առաք ձյուն

Հունվարի 25-ի գիշերը նվազագույնը ութ ձնահոսք է թափվել Տրանսկովկասյան մայրուղու վրա: Ավտոմայրուղին փակվել է երթուղեկության համար: Մայրուղու մոտ՝ լանջերին ձյան բարձրությունը հասել է 70-80 սանտիմետրի: Ինչպես հաղորդում է Հա-

անհրաժեշտ է 3-4 օր՝ ձյունը մաքրելու եւ տուժածներին գտնելու համար:

14 օր փլափակներում


Հայիթիում տեղի ունեցած ուժգին երկրաշարժից 14 օր անց ամերիկացի զինծառայողները մայրաքաղաք Պորտ-օ-Պրենսի փլատակներից հանել են 35-ամյա մի տղամարդու եւ 14-ամյա աղջնակի: Փրկարարները հրաշք են անվանել այն, որ նրանց հաջողվել է կենդանի մնալ: Բժիշկների հավաստմամբ՝ փրկվածների կյանքին վտանգ չի սպառնում:

Հայիթիի երկրաշարժը խլել է մոտ 150 հազար մարդու կյանք եւ առանց տանիքի թողել հարյուր հազարավոր հայիթցիների: Հունվարի 23-ին երկրի իշխանությունները պաշտոնապես հայտարարել են որոնողափրկարարական աշխատանքների դադարեցման մասին:

Միեւնույն ժամանակ Հայիթիում տարածվում են անկարգությունները. մարդիկ չեն կարողանում բաշխել տարբեր երկրներից ստացված մարդասիրական օգնությունը: Հազարավոր մարդիկ մասնակցում են սննդամթերքի, խմելու ջրի եւ դեղորայքի համար բախումներին: ՄԱԿ-ի առաքելության ղեկավարությունը որոշում է

ընդունել սննդամթերք եւ ջուր հատկացնել միայն կանանց: Նման ձեւով ՄԱԿ-ը փորձում է նվազեցնել դիակապտության ռիսկը:

Արտակարգ դրություն Պերուում



Մոտ երկու հազար զբոսաշրջիկ պատանդ է դարձել ինկերի հնագույն քաղաք Մաչու Պիկչուին: Տեղատարափ անձրեւների պատճառով Պերուի գլխավոր տեսարժան վայրը մեկուսացվել է արտաքին աշխարհից: Հունվարի 25-ի երեկոյան սողանքները փակել են Մաչու Պիկչուին Կուսկո քաղաքին միացնող երկաթգծը: Զբոսաշրջիկներին եւ տեղի բնակչությանը տարահանում են ուղղաթիռներով: Տարբեր գոհ է դարձել երկու մարդ: Անձրեւները հեղեղել են հարյուրավոր հեկտար տարածք, անօթեւան է մնացել մոտ երեք հազար մարդ:

Ֆաինա Թյունիբայան

արագ արձագանքման ծառայություններ



«» դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկի եւ հատուկ փրկարար ջոկատի հերթապահ խումբը:

Ժամը 17.37-ին հասնելով դեպքի վայր՝ հրշեջ-փրկարարները հայտնել են, որ տեղի ուժեղով ջրամբարից դուրս է բերվել մոտ 13 տարեկան տղա երեխա, որի կյանքին, ըստ ականատեսների, վտանգ չի սպառնում:

Վրանգը վերացվել է

Հունվարի 25-ին, ժամը 20.10-ին ահազանգ է ստացվել, որ ուժեղ քամու հետեւանքով Երեւանի Շահումյան 4-րդ փողոցի թիվ 61 տան տանիքի թիթեղները պոկվել են եւ առկա է ընկնելու վտանգ:

Տանիքից կախված թիթեղը փրկարարների կողմից ապամոնտաժվել է ու տեղափոխվել անվտանգ տարածք:

Ընկել է հորը

Հունվարի 27-ին, ժ.13:45-ին «1-03» ծառայության դիսպետչեր Ջաքարյանից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Գ.Յուսեփյան փողոցի 23-ին, ժամը 01.55-ին հորեղ է բռնկվել Կոտայքի մարզի Ջրառատ գյուղում:

սեփյան փողոցի թիվ 8 շենքի հարակից հորում տղամարդ է ընկել եւ նրան դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարար ջոկատի հերթապահ խումբը:

Ժ.14:20-ին փրկարարների ուժերով հորից դուրս է բերվել Գրիգոր Յուսեփյանը (ծնվ.1939 թ.) եւ հանձնվել «1-03» ծառայության աշխատակիցներին:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 29 դեպք:

Հրդեհ Ջրառատում

Հունվարի 23-ին, ժամը 01.55-ին հորեղ է բռնկվել Կոտայքի մարզի Ջրառատ գյուղում:

Դեպքի վայր է մեկնել Հրազդանից երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 02.22-ին:

Այրվել է Լ. Ավետիսյանին պատկանող տան բակում պահեստավորված 8 տոննա խոտը:

Գոհար Բաղդասարյան

սեյսմիկ պաշտպանություն

Ս. ք. հունվարի 21-ից 27-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ նրան հարակից տարածքներում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են մեկ թույլ երկրաշարժ: 3 բալանոց սեյսմիկ ցնցումը տեղի է ունեցել հունվարի 25-ին Հայաստան-Ադրբեջան (Նախիջեւան) սահմանային գոտում, եղեգնածոր քաղաքից 16 կմ դեպի հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել մեկ թույլ երկրաշարժ: Այն գրանցվել է հունվարի 26-ին Ադրբեջանի (Նախիջեւան) Օրդուբադ քաղաքից 9 կմ դեպի հյուսիս-արեւմուտք, եւ ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3 բալ:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է մեկ ուժեղ երկրաշարժ: Հունվարի 27-ին 6.1 մագնիտուդով երկրաշարժը տեղի է ունեցել Խաղաղ օվկիանոսի հարավ-արեւմտյան մասում՝ Ֆիլիպինների Կատանդուանես կղզու շրջակայքում, ցունամի չի առաջացել: Ձուներ եւ ավերածություններ չկան:

ՍՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Հունվարի 21-26-ը դիտված հիդրոօդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

Հունվարի 21-26-ը հանրապետության շրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ: Լեռնային եւ նախալեռնային շրջաններում տեղումները դիտվել են ծյան, իսկ առանձին հովտային շրջաններում՝ անձրեւի տեսքով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում՝ +10...+15 °C, Արարատյան դաշտում, Սյունիքի նախալեռներում եւ Արցախում՝ +7...+12 °C, Տավուշում՝ +5...+10 °C, Լոռիում՝ +3...+8 °C, լեռնային շրջաններում՝ +1...+6 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ -15...-20 °C (Ստեփանավանում՝ -23 °C), Տավուշում, Արարատյան դաշտում եւ Սյունիքի նախալեռներում՝ -6...-11 °C, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ 0...-4 °C:

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հունվարի 28-ին, փետրվարի 1-ին սպասվում է առանց տեղումների եղանակ, 29-31-ին արեւմտյան շրջաններում հնարավոր են թույլ տեղումներ: Քամին՝ հարավարեւմտյան՝ 2-7 մ/վ:

Օդի ջերմաստիճանը 28-ի գիշերը կնվազի 2-4 °C, 29-1-ի գիշերը ընդհանուր առմամբ կբարձրանա 13-15 °C, ցերեկը՝ 8-10 °C -ով:

Հունվարի 28-ին նվազագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի -9...-12 °C, Սյունիքի հովիտներում՝ -4...-9 °C, Տավուշում՝ -8...-13 °C, Լոռիում՝ -15...-20 °C, Սյունիքի նախալեռներում՝ -13...-18 °C, լեռնային շրջաններում՝ -19...-24 °C աստիճանի սահմաններում:

Առավելագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի 0...-3 °C, Սյունիքի հովիտներում եւ Տավուշում՝ -3...+1 °C, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ -2...-7 °C, լեռնային շրջաններում՝ -5...-10 °C աստիճանի սահմաններում:

Հունվարի 29-31-ին, փետրվարի 1-ին նվազագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի -1...-5 °C, Սյունիքի հովիտներում եւ Տավուշում՝ -3...+2 °C, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ -4...-7 °C, լեռնային շրջաններում՝ -6...-11 °C աստիճանի սահմաններում:

Առավելագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի +4...+9 °C, Սյունիքի հովիտներում եւ Տավուշում +7...+12 °C, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ +3...+8 °C, լեռնային շրջաններում՝ 0...-4 °C աստիճանի սահմաններում:

Երեւանում հունվարի 28-ին եւ փետրվարի 1-ին սպասվում է առանց տեղումների եղանակ, 29-31-ին՝ փոփոխական ամպամածություն, հնարավոր են թույլ տեղումներ:

Օդի ջերմաստիճանը 28-ի գիշերը կտատանվի -11...-13 °C, ցերեկը՝ 0...-2 °C, 29-01-ին՝ գիշերը 0...-5 °C, ցերեկը՝ +3...+8 °C սահմաններում:

Անդրբայկալում Արփակարգ իրավիճակ է 40 հազար քաղաք այծքաղների ներգաղթի պայմանով



Անդրբայկալի իշխանությունները դիտարկում են արտակարգ իրավիճակ հայտարարելու հնարավորությունը՝ Մոնղոլիայի հետ սահմանակից տարածքներում, ուր դեկտեմբեր ամսից ներգաղթում են վայրի այծքաղները (անտիլոպ):

Տարածքում արդեն մոտ 40 հազար կենդանի է կուտակվել, իսկ Մոնղոլիայի կողմից՝ եւս 60-70 հազարը:

Այծքաղները Ռուսաստան են գնում Մոնղոլիայի տափաստանների ծայրահեղ ցրտերի ու հաստ ձնածածկույթի պատճառով: Եղանակային խիստ պայմանները նրանց զրկել են կերից:

Կարմիր գրքում հայտնված այծքաղների այս տեսակի տարերային գաղթը Մոնղոլիայի տարածքից սկսվել է 2009 թ. վերջին ու շարունակվում է մինչեւ հիմա:

Նահանգապետի մամուլի ծառայության ներկայացուցիչն ասել է, որ ներգաղթող վայրի կենդանիները ոչնչացնում են գյուղատնտեսական կենդանիների համար նախատեսված կերը: Այծքաղները վնասել են նաեւ սամանային ուղեկալի ինժեներապաշտպանական կառուցվածքները: Նահանգապետը հանձնարարել է վերահսկել իրավիճակն ու անհրաժեշտության դեպքում արտակարգ դրություն հայտարարել:

- Սահմանակից տարածքներում համատեղ գործողությունների պլան են մշակել Պետոստորոճառայության եւ ոստիկանության աշխատակազմիները: Պատրաստվել են 3000 թռուցիկներ, որոնք բացատրում են մարդկանց, որ չի կարելի կրակել Կարմիր գրքում գրանցված կենդանիների վրա, - ասել է մամուլի ծառայության ներկայացուցիչը:

Ռուսաստանում այս այծքաղները գրանցվել են Կարմիր գրքում, քանի որ մոտ հարյուր տարի առաջ, մարդու ակտիվ տնտեսական գործունեության հետեւանքով հեռացել են մոնղոլական անմարդաբնակ տափաստաններ: Մեկ դար անց այծքաղները կրկին ապրում են Դաուրյան տափաստաններում: Վերջին 10-15 տարիների ընթացքում Անդրբայկալում նորից հայտնվեցին այս կենդանիները, որոնք մի քանի պարտադիր գաղթերից հետո այլեւս չեն վերադառնում Մոնղոլիա: Երկրամասում ծրագրում են 200 հա արգելոց ստեղծել այս հազվագյուտ տափաստանային այծքաղների համար:

Եթովպական ինքնաթիռն ընկել է Միջերկրական ծովը

«Եթովպական ավիաուղիների» «Բոինգ - 737» ուղեւորատար ինքնաթիռը կործանվել է Բեյրութի օդանավակայանից թռչելուց անմիջապես հետո:

Օդանավը, որում 92 ուղեւոր կար, ընկել է Միջերկրական ծովը: Այն ռադարների էկրաններից անհետացել է օդ բարձրանալուց 5 րոպե անց: Իշխանությունները չեն կարծում, որ աղետի պատճառը ահաբեկությունն է: «Ներկա պահին ահաբեկության վարկածը քիչ հավանական է: Պատճառը կարող է լինել հետաքննության արդյունքում», - հայտարարել է Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանը:

Աղետից երկու օր անց պաշտպանության նախարար Էլիաս Էլ-Մուրրան հայտարարել է, որ «Բոինգ - 737»-ի օդաչուն անհայտ պատճառներով չի ենթարկվել դիսպետչերի հրահանգներին՝ ուղղության փոփոխության վերաբերյալ, ինչն էլ կարող է աղետի պատճառը լինել:

«Գրանցումները ցույց են տալիս, որ դիսպետչերները օդաչուին հրամայել են հետ շրջվել՝ փոթորկի մեջ չհայտնվելու համար, բայց ինքնաթիռն ուղղվել է հակառակ կողմ: Մենք չգիտենք, թե ինչու է դա տեղի



ունեցել, եւ արդյո՞ք օդաչուն կառավարում էր իրավիճակը», - ասել է նա:

Նախնական տվյալների համաձայն, ինքնաթիռն եղել է 90 մարդ, այդ թվում՝ Լիբանանի՝ 54, Եթովպիայի 22 քաղաքացի, մյուսներն Իրաքի, Սիրիայի, Ֆրանսիայի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի քաղաքացիներ են եղել: Բոլոր ուղեւորներն ու անձնակազմի անդամները գոհվել են:

Լիբանանի վարչապետ Սաադ Չարիրին երկրում սուգ է հայտարարել:





ԿԱՉՏՈՒՆԱԿԱՆ

Հրդեհների վիճակագրություն

2009 թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 813 հրդեհ՝ 378 520 566 դրամի նյութական վնասով: Հրդեհից զոհվել է 16, վնասվածքներ ստացել՝ 24 մարդ:

2008 թ. նույն ժամանակահատվածի համար վերը նշված տվյալները կազմել են համապատասխանաբար 1125 հրդեհ, 1 876 602 376 դրամի նյութական վնաս, 31 զոհված եւ վնասվածքներ ստացած 55 քաղաքացի:

Այսպիսով, հրդեհների քանակը նվազել է 312 դեպքով (27.7%), իսկ վնասի գումարը՝ 1 498 081 810 դրամով (79.8%): Չոհերի թիվը նվազել է 15-ով (48.4%), իսկ վնասվածք ստացածներինը՝ 31-ով (56.4%): Հրդեհների քանակն աճել է Երևան քաղաքում եւ Կոտայքի մարզում, իսկ նվազել՝ մյուս բոլոր մարզերում:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հրդեհների քանակի, զոհերի, վնասվածքներ ստացածների եւ հրդեհներից պատճառված նյութական վնասի զգալի նվազումը հիմնականում պայմանավորված է Պետական հրդեհային տեսչության ու նրա տարածքային ստորաբաժանումների արդյունավետ եւ առավել որակյալ աշխատանքով, որոշ չափով էլ՝ բարենպաստ գարնանային եղանակով (2008 թ. գարնանը հանրապետությունում հաս-

տատված աննախադեպ շոգի համեմատ, ինչի հետեւանքով մեծ թվով հրդեհներ տեղի ունեցան կանաչապատ տարածքներում):

Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 40-ը խոշոր եւ առավել խոշոր են (նախորդ տարի՝ 54), դրանցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է 287 296 660 դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 75.9%-ն է: Առավել խոշոր հրդեհներից են՝ 1) Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Նալբանդյան-1, օժանդակ շինություն՝ 44 500 000 դրամ: 2) ք.Երեւան, Բագրատունյաց-70, «Նախիտ գործարան» ՓԲԸ՝ 26 235 840 դրամ: 3) ք.Երեւան, Իսահակյան 18, «Հայաստանի կույրերի միավորում», շենքի տանիք՝ 21 030 000 դրամ: 4) ք.Երեւան, Աթոյան-91 տուն՝ 16 592 500 դրամ: 5) ք.Երեւան, Ներսիսյան



10ա, «ԷՓԻՋԻԱՐՄ» ՍՊԸ լաբորատորիա՝ 11 515 750 դրամ: 6) Արագածոտնի մարզ, գ. Կոշ, ԲԼԿ, ավտոմեքենա՝ 11 214 590 դրամ: 7) Շիրակի մարզ, գ. Բերդաշեն, բնակելի տուն՝ 12 800 000 դրամ: 8) ք.Երեւան, Խանջյան 5, «Մանկավարժական համալսարան»՝ 8 882 608 դրամ: 9) Արագածոտնի մարզ, գ. Արագածավան, բնակելի տուն՝ 8 770 000 դրամ: 10) Եղեգնաձոր-Երասխ ավտոմայրուղի, «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա՝ 8 000 000 դրամ: 11) ք.Երեւան, Մարգարյան 6, «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենա՝ 7 400 000 դրամ: 12) Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան, բնակելի տուն՝ 6 700 000 դրամ: 13) Գեղարքունիքի մարզ, գ. Մեծ Մասրիկ, բնակելի տուն՝ 6 210 000 դրամ: 14) Շիրակի մարզ, գ. Եղնաջուր, բնակելի տուն՝ 6 000 000 դրամ:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 37.1%, էլեկտրական սարքավորումների տեղակայման եւ շահագործման կանոնների խախտումը՝ 25.2%, երեխաների խաղալը կրակի հետ՝ 12.6%, վառարանների տեղակայման եւ շահագործման կա-

նոնների խախտումը՝ 6.5%, հրկիզումները՝ 2.1%, այլ պատճառները՝ 18.6%:

Չոհերով հրդեհներ են գրանցվել հետեւյալ տարածաշրջաններում՝ ք.Երեւան՝ 7, Սյունիք եւ Արագածոտն՝ երկուսն էլ, Շիրակ, Կոտայք, Արմավիր, Լոռի, եւ Տավուշ՝ մեկական: Չոհերի գերակշիռ մասը՝ 12-ը, արձանագրվել է բնակելի հատվածում, իսկ 4-ը՝ այլ օբյեկտներում: Չոհվածներից մեկը երեխա է, իսկ 10-ը՝ տարեցներ (70 տարեկանից բարձր):

Վնասվածքներով հրդեհներ են գրանցվել հետեւյալ տարածաշրջաններում՝ Արմավիր՝ 7, ք.Երեւան՝ 4, Շիրակ, Տավուշ եւ Արագածոտն՝ երեքական, Սյունիք՝ 2, Լոռի եւ Գեղարքունիք՝ մեկական: Վնասվածքներ ստացածների մեծ մասը՝ 13-ը, արձանագրվել է բնակելի հատվածում, 8-ը՝ ավտոմեքենաներում, իսկ 3-ը՝ այլ օբյեկտներում: Վնասվածքներ ստացածներից մեկը երեխա է, իսկ 3-ը՝ տարեցներ (70 տարեկանից բարձր):

Դատաքննչական մարմիններ է ուղարկվել 107 հրդեհի նյութ, որոնցից 17-ը՝ հրկիզումների դեպքերով: Նշված դեպքերի նյութերով 71-ի վե-

Պետական հրդեհային տեսչությունը հայտնում է

Հրդեհային անվտանգությանը վերաբերող հարցերով անհրաժեշտ տեղեկատվություն եւ խորհրդատվություն ապահովելու նպատակով ՀՀ ԱԻՆ ՀՓԾ Պետական հրդեհային տեսչության պետ Ա.Ղարիբյանի կարգադրությամբ 2010 թվականի հունվարի 11-ից գործում է թեժ գիծ՝ 53-04-62 հեռախոսահամարով: Անցած օրերի ընթացքում Պետական հրդեհային տեսչություն են դիմել բազմաթիվ քաղաքացիներ եւ ստացել համապատասխան մասնագիտական խորհրդատվություն:

Հարգելի քաղաքացիներ, Ձեր անվտանգության ապահովման նպատակով, ինչպես նաեւ հրդեհային անվտանգության հարցերի վերաբերյալ սպառնիչ եւ որակյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք զանգահարել վերը նշված հեռախոսահամարով:

Թեժ գիծ
53-04-62

րաբերյալ քրեական գործի հարուցումը մերժվել է, 9-ը՝ կասեցվել, 3-ը՝ կարճվել եւ 24-ը վարույթում է: ՀՀ «Քրեական» եւ «Քրեական դատավարության» օրենսգրքերի պահանջներին համապատասխան կատարվել են հրդեհների հետաքննության աշխատանքներ:

Սերգեյ Հայրապետյան
ՊՅՏ ՀՀՎՀՔ բաժնի պետ



Նոր գործընկեր՝ Բրազիլիա

Հունվարի 25-ից 30-ը Երևանում էր Բրազիլական Ռազմական Հրշեջ Մարմնի Պատվիրակությունը: Այցելության նպատակը հրշեջ ծառայությունների ոլորտում փորձի փոխանակումն էր եւ երկու երկրների միջեւ հետագա համագործակցության զարգացման նախապայմանների ստեղծումը:

Պատվիրակության անդամներ գնդապետ Մարկոս Ռոսիլիդես Աբեու, փոխգնդապետներ Լիսանդրու Պաշաու դոս Սանտուսը եւ Պաուլո Ժոզե Բարբոզա ջի Սոուզան այցի ընթացքում ծանոթացան Հայաստանում Արտակարգ իրավիճակների նախարարության ու, հատկապես, հրշեջ ծառայության աշխատանքին, հան-

դիպումներ ունեցան Մասիսի եւ Աբովյանի, ինչպես նաեւ Երեւանի թիվ 12 եւ 8 հրշեջփրկարարական ջոկատներում:

Պատվիրակության անդամները ցանկություն էին հայտնել ծանոթանալ նաեւ ՀՓԾ հանրային իրազեկման ծրագրերին: Այդ նպատակով նրանք այցելեցին «Արտակարգ Ալիք» լրատվական կենտրոն, շրջեցին ու մանրամասն ծանոթացան կենտրոնի կողմից արված ու նախաձեռնվող ծրագրերին:

Բրազիլիա քաղաքի փրկարար ծառայության վաշտի հրամանատար, գնդապետ Մարկոս Ռոսիլիդես Աբեու, միելնույն կառույցի ներկայացուցիչ Լիսանդրու Պաշաու

դոս Սանտուսը եւ ՄԱԿ-ի Ամերիկաների միջազգային որոնողափրկարարական խմբի փոխնախագահ Պ. Սոուզան, որն, ի դեպ, 2008 թվականի մարտին մասնակցել է Հայաստանում անցկացնած INSARAG-ի ուսումնամարտությանը, տպավորված էին կենտրոնի իրականացրած հսկայածավալ աշխատանքով:

Պաշտոնական հանդիպումներից բացի Բրազիլիայից ծանանած հրշեջ ջոկատը այցելել է նաեւ Հայաստանի մի քանի գեղատեսիլ վայրեր, ինչպես նաեւ՝ Մատենադարան ու Ծիծեռնակաբերդ:

- Մենք անչափ ուրախ կլինենք, եթե մեզ հաջողվի կայուն համագործակցություն հաս-



տատել, որի արդյունքում կարող ենք փրկել անգամ մեկ կյանք, - ասել է պատվիրակության ղեկավարը:

Մեկնելուց առաջ երկու

կողմերի միջեւ ստորագրվելու է համագործակցության համաձայնագիր, որն ավելի կամրապնդի կապերը երկու երկրների միջեւ:



Երկրաշարժի հոգեբանական հետեւանքները

33-ամյա Աստղիկ Սիմոնյանը Ստեփանավանի Թումանյանի անվան դպրոցի 6-րդ դասարանում էր սովորում, երբ երկրաշարժը եղավ: Իր հասակակից երեխաներից շատերի պես նա էլ հետո տեւական վախ ու տագնապ ապրեց:

- Ցնցումներից առաջինի տպավորությունն այնպիսին էր, ասես ինչ-որ զինվորական ինքնաթիռներ են օդով ճախրում ու դրանից է այդ դղրոյունը: Դե, իհարկե, չգիտեմ, որ գեներալներից էր արմուկը, - պատմում է Աստղիկը, - ուզում էիմի տեսնել ի վերջո՝ ի՞նչ է այդ երկրաշարժը իրենից ներկայացնում, ի՞նչ է կատարվել, ի՞նչ վնաս է հասցրել սիրելի քաղաքին: Տեսնեմ ամբողջ մի աղբարկույս, շինարարական աղբարկույս, որ կոչվում են փլուզվածներ, ու մարդիկ աշխատում էին, հասկառեմ՝ այնտեղ, որտեղից ձայներ էին լսվում, որ կարողանան այդ փլուզվածներից գոնե մեկին, ես մեկին փրկել: Չգիտեմ, լուրս աստիճանի էր: Երեւի թե օրեր էին, որ լավ կլիմի այլևս չլիներ ոչ մի երեխայի կյանքում:

Երկրաշարժից հետո հոգեբանական կենտրոններ ստեղծվեցին ինչպես Ստեփանավանում, այնպես էլ աղետի գոտու մյուս քաղաքներում: Աստղիկին ու իր համադասարանիցիներին էլ հրավիրեցին հոգեբանական կենտրոն: Դա Աստղիկի առաջին ծանոթությունն էր հոգեբանի աշխատանքին, ինչը շատ հետաքրքրեց նրան ու որոշիչ դեր ունեցավ մասնագիտության ընտրություն կատարելիս:

- Այն ժամանակ հեռախոս էր, ինչ-որ ժամանցային խաղ-վարձուքներ էր, բայց հիմա հասկանում եմ, որ դա էլ մեթոդ էր՝ զբաղվելու, բացահայտելու նրանց, ովքեր սթրես են տանում: Ես հասկացա, որ դա մի մասնագիտություն է, որը լուրս անհրաժեշտ է մարդկանց, ու միայն հոգեբանը

մարդկանց կողմից կանգնած լինի:

Չետազայում բազմաթիվ հոգեբանական ծառայություններ ստեղծվեցին: Հոգեբաններն ուսումնասիրեցին ու պարզեցին, որ 1988-ի երկրաշարժը եւ դրան հաջորդած տարիները լուրջ վնաս են հասցրել հասարակության հոգեկան առողջությանը: Միմյանց հաջորդած ցնցումները՝ երկրաշարժը, պատերազմը, տնտեսական ճգնաժամը, տակնուվրա են արել մարդկանց ներաշխարհը:

Մելս Սկրտումյանը Երեւանի պետական համալսարանի փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետի Հոգեբանության տեսության եւ պատմության ամբիոնի պրոֆեսոր է, հոգեբանական գիտությունների դոկտոր: Նա ասաց, որ համալսարանում թեմայի վերաբերյալ արդեն 6 առեւտրախոսություն՝ մեկ դոկտորական եւ 4 թեկնածուական է պաշտպանվել, եւ վիճակագրությունն այնքան էլ հուսադրող չէ:

